https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-56

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՄԱՐԻԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ
իրավագիտության մագիստրոս

ARPINE HOVHANNISYAN
Lecturer at the Chair of Civil Law of YSU Faculty of Law,
PhD, Associate Professor
MARIAM AYVAZYAN
LLM

АРПИНЕ ОГАНЕСЯН
Преподаватель кафедры гражданского права
юридического факультета ЕГУ,
кандидат юридических наук, доцент
МАРИАМ АЙВАЗЯН
Магистр права

ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

MORAL RIGHTS OF PERFORMERS

ЛИЧНЫЕ НЕИМУЩЕСТВЕННЫЕ ПРАВА ИСПОЛНИТЕЛЕЙ

Ներածություն

Կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների (moral rights) վերաբերյալ քննարկումները բավական նոր ֆենոմեն են: Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին Հռոմի Կոնվենցիան (այսուհետ՝ Հռոմի Կոնվենցիա) չէր նախատեսում անձնական ոչ գույքային իրավունքներ կատարողների համար: Կատարողների ոչ գույքային իրավունքների մասին առաջին միջազգային փաստաթուղթը՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիրն (այսուհետ՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր) էր, որին հետագայում ավելացավ «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագիրը (այսուհետ՝ Պեկինի պայմանագիր): Հետևելով Բեռնի կոնվենցիայի 6-րդ bis հոդվածի ավանդույթներին՝ և՛ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, և՛ Պեկինի պայմանագիրը կատարողների համար նախատեսում են երկու խումբ անձնական ոչ գույքային իրավունքներ, մասնավորապես՝

- Իր կատարման նկատմամբ կատարող ճանաչվելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ իրավունքի սահմանափակումը պայմանավորված է կատարման օգտագործման բնույթով,
- Առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման, ձևափոխման և այլ գործողությունների դեմ, որոնք վնասում են կատարողի համբավը:

Այս իրավունքների ցանկը սպառիչ չէ, և յուրաքանչյուր պետություն կարող է նախատեսել կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների ավելի լայն ծավալ: ՀՀ օրենսդրությունը, սակայն, կատարողների համար սահմանել է միայն վերոգրյալ երկու իրավունքները: Այսպես՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածը (այսուհետ՝ Օրենքը) ամրագրում է, որ կատարողն ունի կատարող ճանաչվելու և կատարումը հնարավոր աղավաղումներից, իր համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու անձնական ոչ գույքային իրավունքներ: Սույն հետազոտության շրջանակում կուսումնասիրվեն ինչպես վերոգրյալ իրավունքները, այնպես էլ կատարողներին վերապահված այլ անձնական ոչ գույքային իրավունքներ:

Հիմնական Հետազոտություն

Կատարող ճանաչվելու իրավունքը (the right of attribution կամ the right of paternity)

Մտավոր սեփականությունում հեղինակ ճանաչվելու կամ կատարող ճանաչվելու իրավունքը հիմնարար անձնական ոչ գույքային իրավունք է: Նշվում է, որ առաջիններից մեկը, որն օգտվել է այս իրավունքից Միքելանջելոն է: Այսպես, երբ Միքելանջելոն նկատել է, որ իր քանդակներից մեկը սխալ է ներկայացվել իր պատվիրատուին, գաղտնի կերպով փորագրել է իր անունը քանդակին՝ դրանով իսկ դառնալով առաջին անձը, որն իրացրել է հեղինակ ճանաչվելու անձնական ոչ գույքային իրավունքը[1]: Թեև սկզբնական շրջանում այս իրավունքը հեղինակներին վերապահված իրավունք էր, ներկայումս այն հավասարապես ճանաչվում է նաև կատարողների համար:

Կատարող ճանաչվելու իրավունքը ենթադրում է, որ կատարողը կարող է պահանջել իր անվան հիշատակումը կատարումից օգտվելու կամ այն ներկայացնելու ժամանակ: Այս իրավունքը նաև հնարավորություն է տալիս կատարողին պահանջելու, որպեսզի կատարումը ներկայացվի կեղծանունով կամ առանց իր անունը նշելու՝ այսինքն՝ անանուն կամ կեղծանունով:

Բացի դրանից՝ կատարողը կարող է պահանջել վերացնել սխալները, եթե իր անունը նշվել է սխալմամբ:

Միաժամանակ, կատարող ճանաչվելու իրավունքը բացարձակ չէ: Կատարումների և հնչյունագրերի վերաբերյալ միջազգային փաստաթղթերը, այդ թվում՝ **Պեկինի պայմանագիրը**, սահմանում են, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել՝ կախված կատարման օգտագործման բնույթից:

Նշենք նաև, որ որոշ երկրներում այս իրավունքը ճանաչվում է կատարողների դասակարգման հիման վրա: Օրինակ՝ Իտալիայում և Սլովակիայում այդ իրավունքից օգտվում են միայն առաջատար կատարողները: Այլ դեպքերում՝ կատարողի անվան հիշատակումն ապահովվում է անհատական կամ կոլեկտիվ բանակցությունների արդյունքում:

Մենք ևս այն կարծիքին ենք, որ որոշակի դեպքերում անհնար է զուտ գործնականորեն իրացնել այս իրավունքը: Օրինակ՝ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է համեր-

[1] Տես *Bird, R.C. and Ponte, L.M.*, 2006. Protecting Moral Rights in the United States and the United Kingdom: Challenges and Opportunities Under the UK's New Performances Regulations. BU Int'l LJ, 24, էջ 222:

գի ժամանակ առանձին-առանձին նշել նվագախմբի հարյուրավոր կատարողների անունները: Այսպես՝ հայտնի է, որ պատմության մեջ հավաքված ամենամեծ նվագախումբը հանդես է եկել 1964 թվականին Օսլոյում և կազմված է եղել 20100 կատարողից[2], բնականաբար նման պարագայում իրատեսական չէ հնչեցնել բոլոր կատարողների անունները: Կամ դժվար է ամեն անգամ նշել կատարողների անունները, երբ երաժշտական կատարումները հնչում են ռեստորաններում, առևտրի կենտրոններում կամ զվարճանքի այլ վայրերում:Այս առումով պետք է նշել, որ ներկայիս Օրենքը[3] կատարող ճանաչվելու իրավունքը դիտարկում է որպես բացարձակ իրավունք՝ առանց որևէ սահմանափակումների: Սակայն, կարծում ենք, որ հետևելով միջազգային պայմանագրերի օրինակին, պետք է սահմանել, որ կատարող ճանաչվելու իրավունքը կարող է սահմանափակվել՝ պայմանավորված կատարման օգտագործման բնույթով: Կարծում ենք՝ այս մոտեցումը հաստատում է հավասարակշռված մոտեցում այն դեպքերի համար, երբ գործնականում հնարավոր չէ նշել բոլոր կատարողներին:

Կատարումը հնարավոր աղավաղումներից, կատարողի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը (the right of integrity)

Կատարողի մյուս հիմնական անձնական ոչ գույքային իրավունքը կատարումը կատարողի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը է: Կատարման ամրագրման ցանկացած փոփոխություն չէ, որ per se վերաբերում է կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների ոտնահարմանը. այստեղ կարևոր է պարզել, թե արդյոք նման գործողությունների արդյունքում վնաս պատճառվել է կատարողի պատվին և արժանապատվությանը, թե ոչ[4]:

Այս տեսանկյունից բավական հետաքրքիր է «Garcia v. Google[5]» գործը: Դերասանուհի Սինդի Լի Գարսիան համաձայնել էր նկարահանվել մի ֆիլմում, որը, ըստ իրեն, պատմական դրամա էր: Նա ստացել էր 500 դոլար՝ երեք օրվա ընթացքում նկարահանված հինգ վայրկյան տևողությամբ դերի համար: Նկարահանումից հետո ռեժիսոր Մարք Բասելի Յուսեֆը վերամշակել էր տեսանյութը, փոխել էր Գարսիայի ձայնը և ներառել այն հակաիսլամական բովանդակություն ունեցող «Մահմեդականների անմեղությունը» ֆիլմում, որը 2012-ին տեղադրվել էր YouTube-ում: Ֆիլմը մեծ վրդովմունք էր առաջացրել ամբողջ աշխարհում՝ հարուցելով բողոքներ և սպառնալիքներ Գարսիայի հասցեին: Գարսիան պնդում էր, որ երբեք համաձայնություն չէր տվել իր մասնակցությանը ֆիլմի այդ տարբերակում: Նա մի քանի անգամ դիմել էր YouTube-ին՝ պահանջելով հեռացնել տեսանյութը:

Համոզվելով, որ YouTube-ի հետ բանակցությունները չեն հանգեցնում ցանկալի արդյունքի, Գարսիան դիմեց դատարան՝ պահանջելով կիրառել հայցի ապահովման միջոց՝ հիմք ընդունելով հեղինակային իրավունքի խախտումը: Սկզբում նահանգային դատարանը որոշեց, որ Գարսիան կարող է ունենալ հեղինակային իրավունք իր կատարած դերի նկատմամբ և բավարարեց հայցի ապահովման միջոց կիրառելու պահանջը: Սակայն վերադաս ատյանները հետագայում չեղարկեցին այդ որոշումը՝ հաստատելով, որ Գարսիան չի հանդիսանում տվյալ

[2] GuinessWorlID Record, The Largest Band
https://www.guinnessworldrecords.com/world-records/69651-largest-band
[3] Տես Օրենքի 44-րդ հոդված, 1-ին մաս, ա ենթակետ:
[4] Տես WIPO, *Records of the Diplomatic Conference on Certain Copyright and Neighboring Rights Questions*, Geneva(1996), էջ 262:
[5] Տես Garcia v. Google, Inc., 743 F.3d 1258 (9th Cir. 2014), amended by Garcia v. Google, Inc., No. 12-57302, 2014 WL 3377343 (9th Cir. July 11, 2014):

ստեղծագործության անկախ հեղինակային իրավունքի սուբյեկտ, և հետևաբար՝ արգելանքն անօրինական է:

Այս գործը լայն քննարկումների առիթ տվեց ամերիկյան իրավական համակարգում[6], քանի որ ստորադաս դատարանը փաստացի ճանաչել էր դերասանի հեղինակային իրավունքը, թեև վերադաս ատյանները մերժեցին այդ մոտեցումը: Այս համատեքստում կարևոր է նշել, որ ամերիկյան իրավական համակարգում ոչ գույքային իրավունքները ճանաչվում են խիստ սահմանափակ դեպքերում, իսկ կատարողներն օժտված չեն հարակից իրավունքների պաշտպանության մեխանիզմներով: Սակայն այս գործը վկայում է, թե ինչպես կարող է կատարման օգտագործումը վնաս պատճառվել կատարողի պատվին և արժանապատվությանը և ինչ հետևանքների կարող է հասցնել կատարողներին ոչ գույքային իրավունքների պաշտպանության հնարավորությամբ չօժտելը: Սակայն Գարսիայի գործը կարող էր այլ կերպ զարգանալ եվրոպական իրավական համակարգում, որտեղ ոչ միայն կատարողները օժտված են հարակից իրավունքներով, այլ նաև ունեն անձնական ոչ գույքային իրավունքներ:

Փաստացի, Գարսիան դիմել էր դատարան՝ հիմնվելով հեղինակային իրավունքի պաշտպանության վրա՝ այն պարզ պատճառով, որ ամերիկյան իրավական համակարգում չկային այլ մեխանիզմներ իր կատարման աղավաղման հետևանքով առաջացած բացասական հետևանքներից պաշտպանվելու համար: Մինչդեռ թե՛ եվրոպական, և թե՛ հայկական իրավական համակարգերում նման դեպքերում կատարողները, այդ թվում՝ դերասանները, ունեն պաշտպանվելու իրավական հնարավորություն, քանի որ կատարումների նկատմամբ ճանաչվում է ոչ միայն կատարողների իրավունքները, այլև ճանաչվում են կատարողների անձնական ոչ գույքային իրավունքները:

Այս առումով Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, և՝ Պեկինի պայմանագիրը պարունակում են որոշակի եզրութաբանական տարբերություններ: Այսպես՝ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը սահմանում է, որ կատարողն իրավունք ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման կամ այլ ձևափոխման, ինչպես նաև իր անվանը վնասող գործողությունների դեմ[7], մինչդեռ Պեկինի պայմանագիրն ամրագրում է, որ կատարողն իրավունքն ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման կամ այլ ձևափոխման դեմ, որը վնաս կհասնի իր համբավին՝ հաշվի առնելով տեսալսողական ամրագրումների բնույթը[8]:

Այս կապակցությամբ նշվում է, որ Պեկինի պայմանագիրը՝ ի տարբերություն Կատարումների և հնչյունագրերի պայմանագրի, սահմանում է ավելի անբարենպաստ ռեժիմ կատարողների համար[9]՝ ամրագրելով, որ կատարողը կարող է առարկել իր կատարման խեղաթյուրման, աղճատման կամ այլ ձևափոխման դեմ: Սակայն միայն կատարման ձևափոխման միջոցով չէ, որ հնարավոր է կատարողի համբավին վնաս հասցնել: Հնարավոր են դեպքեր, որ

[6] Տես օրինակ Ferrari, Joe. "Garcia v. Google: The Impracticalities of Awarding Copyright Authorship for Five Seconds of Fame." *Santa Clara L. Rev.* 56 (2016): 375. https://digitalcommons.law.scu.edu/cgi/viewcontent.cgi?article=2823&context=lawreview
Martin, Elizabeth. "Using Copyright to Remove Content: An Analysis of Garcia v. Google." *Fordham Intell. Prop. Media & Ent. LJ* 26 (2015): 463. https://ir.lawnet.fordham.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1619&context=iplj
Victor, Jacob M. "Garcia v. Google and a" Related Rights" Alternative to Copyright in Acting Performances." *Yale LJF* 124 (2014): 80. https://www.yalelawjournal.org/pdf/VictorPDF_j5kiqgxo.pdf
[7] Տես Կատարումների և հնչյունագրերի պայմանագիր, Հոդված 5:
[8] Տես Պեկինի պայմանագիր, Հոդված 5:
[9] Տես The International Federation of Actors, The moral rights of the performers, The current situation (2013) էջ 24 http://www.fia-actors.com/uploads/EN-Moral-Rights-Spread%20version%20E.pdf

միայն կատարման օգտագործումը այս կամ միջոցառմանը արդեն իսկ կարող է վնաս հասցնել կատարողի համբավին: Այսպես, օրինակ, աշխարհահռչակ տենոր Լուչիանո Պավարոտի այրին ԱՄՆ 2016 թվականի ընտրությունների ժամանակ պահանջել էր Նախագահի թեկնածու Դոնալդ Թրամփից դադարեցնել նախընտրական քարոզարշավի ժամանակ օգտագործել Պավարոտիի «Նեսում Դորմա» կատարումը՝ հիմնավորելով, որ Թրամփի դավանած արժեքները համատեղելի չեն աշխարհահռչակ տենորի արժեքների հետ[10]: Այս առումով դասական օրինակ է համարվում նաև Shostakovich v. Twentieth Century Fox Film Corp գործը: Այս գործը թեև չի վերաբերում կատարողների անձնական ոչ գույքային իրավունքներին, սակայն վառ օրինակ է, թե ինչպես միայն ստեղծագործության օգտագործումը կարող է դիտարկվել որպես պատիվը և արժանապատվությունը արատավորող գործողություն: Գործի հանգամանքները հետևյալն էր. 1948 թվականին նկարահանվել էր «Երկաթյա վարագույր» ֆիլմը, որը վերաբերում էր ԽՍՀՄ-ի կողմից Կանադայում լրտեսության դեպքերին: Ֆիլմի ընթացքում օգտագործված էր ԽՍՀՄ-ի կոմպոզիտորների, այդ թվում՝ Շոստակովիչի երաժշտությունը: Քանի որ կոմպոզիտորը համարում էր, որ ֆիլմն ունի հակասովետական ուղղվածություն, նա հայց ներկայացրեց «Twentieth Century Fox Film Corp» դեմ, սակայն որևէ հաջողություն չունեցավ: Ամերիկյան դատարանը, ի թիվս այլնի, կատարել էր իր վերլուծությունները՝ հղում տալով հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքներին: Սակայն, հաշվի առնելով այն, որ ամերիկյան օրենսդրությունը, որպես կանոն, հեղինակներին չի վերապահում անձնական ոչ գույքային իրավունքներ, դատարանը հանգեց այն եզրակացությանը, որ ֆիլմում Շոստակովիչի երաժշտության օգտագործումը իրավաչափ է[11]: Հետաքրքրական է, որ միևնույն հանգամանքները քննել էր ֆրանսիական դատարանը՝ «Soc. Le Chant de Monde v. Soc. Fox Europe et Soc» գործի շրջանակում, և եկել տրամաբանորեն այլ եզրահանգման: Բան այն է, որ Ֆրանսիան այն երկրներից է, որտեղ հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքներին տրված է բավական լավ պաշտպանություն, ուստի դատարանը գտավ, որ հակասովետական ֆիլմում Շոստակովիչի երաժշտության օգտագործումը ոտնահարում է նրա անձնական ոչ գույքային իրավունքները[12:]

Սրա հետ մեկտեղ, Պեկինի պայմանագիրն ամրագրում է, որ իրավունքների խախտումը որոշելիս պետք է գնահատման ենթակա դարձել տեսալսողական ամրագրումների բնույթը: Մեր կարծիքով՝ այս մոտեցումը նախատեսում է ավելի հստակ չափանիշ գնահատելու համար, թե արդյոք խախտվել են կատարողի անձնական ոչ գույքային իրավունքները, թե ոչ, քանի որ միանշանակ է, որ, օրինակ, միայն կատարման ամրագրման ձևաչափի փոփոխությունը բավարար չէ՝ համարելու, որ խախտվել են կատարողների իրավունքները: Հատկապես հիմա, երբ կատարման ամրագրումները ենթարկվում են բազմաթիվ փոփոխությունների և հարմարեցումների, որպեսզի հասանելի դառնան ամենատարբեր հարթակներով: Օրինակ՝ շատ են այն դեպքերը, երբ մեծ կինոդահլիճների համար ամրագրված տեսալսողական կատարումները հետագայում հարմարեցվում են հեռուստատեսային ձևաչափին[13:] Հետևաբար, նման չափանիշի ամրագրումը պետք է դիտարկել որպես դրական քայլ:

[10] Տես NBC News, Pavarotti Widow Tells Trump to Stop Using 'Nessun Dorma' in Campaign (July 2016) https://www.nbcnews.com/news/world/pavarotti-widow-tells-trump-stop-using-nessun-dorma-campaign-n614721

[11] Տես Petrik, T.M., 2011. Moral Rights of Composers: The Protection of Attribution and Integrity Available to Musicians in the European Union and United States. *Fordham Intell. Prop. Media & Ent. LJ*, *22*, էջ 374-375:

[12] Տես նույն տեղը:

[13] Տես, AdlerBernard, The Proposed New WIPO Treaty for Increased Protection ofAudiovisual Performers: Its Provisions and Its Domesticand International Implications, Fordham Intellectual Property, Media and Entertainment Law Journal(2002), էջ 1104:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությունը պետք է դրսևորի համակցված մոտեցում՝ իր մեջ ներառելով ինչպես Կատարումների և հնչյունագրերի, այնպես էլ Պեկինի պայմանագրերով նախատեսված եզրութաբանությունը:

Ուստի կարծում ենք, որ Օրենքով պետք է ամրագրել, որ կատարողն իրավունքն ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման, ձևափոխման, որոնք վնաս են հասցնում կամ կարող են հասցնել իր համբավին՝ հաշվի առնելով կատարման բնույթը: Կատարողը իրավունք ունի նաև առարկել իր անվանը վնասող այլ գործողությունների դեմ, որոնք վնաս են հասցնում կամ կարող են հասցնել իր համբավին:

Անձնական ոչ գույքային այլ իրավունքներ

Կատարողների անձնական ոչ գույքային այլ իրավունքները քննարկելու համար կարևոր է համեմատականներ տանել հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքների ծավալի հետ: Ընդհանրապես երկրների մեծամասնությունը հեղինակներին վերապահում են երկու անձնական ոչ գույքային իրավունքներ՝ հեղինակ ճանաչվելու և իր ստեղծագործությունը հնարավոր խեղաթյուրումներից պաշտպանելու իրավունքը: Դրան զուգահեռ կան երկրներ, որոնք վերոգրյալ երկու իրավունքներից զատ հեղինակի համար ճանաչում են ստեղծագործությունը հրապարակելու իրավունքը և ստեղծագործության հետկանչի իրավունքը[14]: Հայաստանի Հանրապետությունը այն երկրների շարքում է, որ հեղինակի համար անձնական ոչ գույքային իրավունքների շրջանակում ճանաչել է նաև վերոգրյալ երկու իրավունքները ևս: Հրապարակման իրավունքի ներքո միայն հեղինակը իրավունք ունի որոշել՝ արդյոք հրապարակել աշխատանքը, և թե երբ, որտեղ և ինչպես պետք է հրապարակվի ստեղծագործությունը, եթե, իհարկե, հեղինակը որոշում է հրապարակել իր ստեղծագործությունը[15]: Հրապարակման իրավունքի հետ սերտորեն փոխկապակցված է նաև հետկանչի իրավունքը, ինչը նշանակում է, որ հեղինակը բացառիկ իրավունք ունի իր ստեղծագործությունը հանել (հետկանչել) քաղաքացիական շրջանառությունից, եթե տվյալ ստեղծագործությունն այլևս չի համապատասխանում իր համոզմունքներին, կամ քաղաքացիական շրջանառության շարունակումը բացասական ազդեցություն կունենա իր հեղինակության վրա, պայմանով, որ նա կհատուցի ստեղծագործությունն օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները[16]: Ընդ որում, հետկանչի իրավունքը չի կիրառվում համակարգչային ծրագրերի, տվյալների բազաների, տեսալսողական ստեղծագործությունների, կազմածո ստեղծագործությունների, կոլեկտիվ ստեղծագործությունների և ծառայողական ստեղծագործությունների նկատմամբ[17]:

Այս առումով պետք է նշել, որ մի շարք երկրներ կատարողների համար նախատեսում են առաջին հրապարակման և հետկանչի իրավունքը[18]:

ՀՀ օրենսդրությունը վերոգրյալ անձնական ոչ գույքային իրավունքները չի նախատեսում կատարողների համար: Սակայն, մեր կարծիքով, եթե նշված իրավունքները վերապահված են հեղինակների համար, ապա դրանք պետք է վերապահվեն կատարողներին: Եվ խնդիրը միայն զուտ ձևական մոտեցումը չէ, որ կատարողներն ու հեղինակները պետք է ունենան համանման իրավունքներ: Բանն այն է, որ կատարողներին՝ ինչպես շատ ստեղծագործողներին,

[14] Տես *Pettenati, L.A.*, 2000. Moral rights of artists in an international marketplace. *Pace Int'l L. Rev.*, *12*,էջ 429:
[15] Տես նույն տեղը:
[16] Տես Օրենքի 12-րդ հոդված, 2-րդ մաս, ե ենթակետ:
[17] Տես Օրենքի 12-րդ հոդված, 3-րդ մաս:
[18] Տես The International Federation of Actors, The moral rights of the performers, The current situation (2013) էջ 26 http://www.fia-actors.com/uploads/EN-Moral-Rights-Spread%20version%20E.pdf

բնորոշ են ստեղծագործական վայրիվերումները: Վերադառնալով նույն Լուչիանո Պավարոտիին՝ պետք է նշել, որ հատկապես գործունեության վերջին տարիներին հաճախ էին դեպքերը, երբ առողջական վիճակով և ձայնի անկմամբ պայմանավորված, նա հրաժարվում էր մասնակցել նախապես համաձայնեցված համերգներին կամ բեմադրություններին, օրինակ՝ 1998 թվականի Գրեմիի մրցանակաբաշխության համերգը կամ Աիդայի բեմադրությունը[19]:

Սա նշանակում է, որ նույն կատարողին պետք է հնարավորություն տալ որոշելու՝ երբ հանդես գալ, երբ հրապարկել իր կատարման ամրագրումը, և, ինչը կարևոր է, հետ կանչել իր այն կատարման ամրագրումները, որոնք, ըստ կատարողի, չպետք է հասանելի լինեն հանրության լայն զանգվածներին, քանի որ, օրինակ, կատարողի համար չափազանց կարևոր է, որ լսարանը իրեն հիշի որպես Բարձր Դոյի արքա[20], քան լսարանի մոտ դրոշմվի նրա տապալված կատարումը: Պետք է նաև հիշել, որ քիչ չեն դեպքերը, երբ մեկ վատ կատարումը կատարողի համար արժեցել է ողջ ստեղծագործական կարիերան:

Իհարկե, կատարողներին նման իրավունքներ վերապահելը գործնականում կարող է առաջացնել մի շարք բարդություններ, որովհետև շատ հաճախ կատարողների նկատմամբ մի շարք իրավունքներով օժտված են հնչյունագրեր արտադրողները, տեսալսողական ստեղծագործության արտադրողները, ֆիլմ արտադրողները և մի շարք այլ սուբյեկտներ: Սակայն ինչպես կարելի հեղինակների հետկանչի իրավունքի համար բացառություններ սահմանել, այնպես էլ կատարումների պարագայում կարելի է բացառություններ սահմանել, օրինակ՝ ծառայողական կատարումների դեպքում:

Կարևոր է նաև անդրադառնալ կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների պահպանման ժամկետներին: Թե՛ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, թե՛ Պեկինի պայմանագիրը կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության համար սահմանում են ժամկետներ: Այսպես օրինակ, Պեկինի պայմանագիրը սահմանում է, որ կատարողի անձնական ոչ գույքային իրավունքները պահպանվում են նրա մահից հետո՝ առնվազն մինչև գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտը: Միևնույն ժամանակ Պայմանագիրը սահմանում է, որ եթե մինչև անդամ պետությունների կողմից Պայմանագրի վավերացման կամ դրան միանալու պահին չի նախատեսում կատարողի մահից հետո նրա անձնական ոչ գույքային բոլոր իրավունքների պահպանություն, ապա ազգային օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդ իրավունքների մի մասը դադարում է գործել նրա մահից հետո[21:]

Այս կապակցությամբ ՀՀ օրենսդրությունը դրսևորել է առավել առաջադիմական մոտեցում՝ ամրագրելով, որ կատարողների իրավունքները գործում են անժամկետ[22]:

Միևնույն ժամանակ Օրենքը[23] սահմանում է, որ կատարողի անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են: Սակայն այս մոտեցումը թերի է, և կատարողների համար հեղինակների համանմանությամբ պետք է սահմանել, որ կատարող ճանաչվելու իրավունքի, համբավի և արժանապատվության իրավունքի պաշտպանությունը իրականացնում են կատարողի ժառանգները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ՀՀ կառավարության լիազորված մարմինը:

[19] Տես Opera News, In Search of Pavarotti (Nov 1998)
https://www.operanews.com/Opera_News_Magazine/2016/In_Search_of_Pavarotti.html
[20] Տես The New York Times, HIGH C, The Note That Makes Us Weep (2007)
https://www.nytimes.com/2007/09/09/weekinreview/09wakin.html
[21] Տես Պեկինի պայմանագիր, Հոդված 5:
[22] Տես Օրենքի 44-րդ հոդված, 2-րդ մաս:
[23] Տես Օրենքի 44-րդ հոդվածը:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

- Հետևելով միջազգային պայմանագրերի եզրութաբանությանը՝ պետք է Օրենքով սահմանել, որ կատարող ճանաչվելու իրավունքը կարող է սահմանափակվել՝ պայմանավորված կատարման օգտագործման բնույթով: Կարծում ենք՝ այս մոտեցումը հաստատում է հավասարակշռված մոտեցում այն դեպքերի համար, երբ գործնականում հնարավոր չէ նշել բոլոր կատարողներին:
- Անդրադառնալով կատարողների համբավի և արժանապատվության իրավունքին, կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությունը պետք է դրսևորի համակցված մոտեցում՝ իր մեջ ներառելով ինչպես Կատարումների և հնչյունագրերի, այնպես էլ Պեկինի պայմանագրերով նախատեսված եզրութաբանությունը: Ուստի Օրենքով պետք է ամրագրել, որ կատարողն իրավունքն ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման, ձևափոխման, որոնք վնաս են հասցնում կամ կարող են հասցնել իր համբավին՝ հաշվի առնելով կատարման բնույթը: Կատարողն իրավունք ունի նաև առարկել իր անվանը վնասող այլ գործողությունների դեմ, որոնք վնաս են հասցնում կամ կարող են հասցնել իր համբավին:
- Կատարողներին կատարող ճանաչվելու, կատարողների համբավի և արժանապատվության իրավունքներից զատ, պետք է վերապահվեն նաև կատարումների հրապարակման և հետկանչի իրավունքները՝ մանրամասն սահմանելով այդ իրավունքների իրացման սահմանները և պայմանները:
- Կատարողների համար հեղինակների համանմանությամբ պետք է սահմանել, որ Կատարող ճանաչվելու իրավունքի, համբավի և արժանապատվության իրավունքի պաշտպանությունը իրականացնում են կատարողի ժառանգները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ՀՀ կառավարության լիազորված մարմինը:

Ամփոփագիր: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության և միջազգային իրավական փաստաթղթերի համատեքստում՝ դիտարկելով դրանց կիրառության ձևերն ու արդի մարտահրավերները:

Հետազոտության արդիականությունն այն է, որ կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների ճանաչումը միջազգային իրավունքում դեռևս համեմատաբար նոր գործընթաց է, և դրանց կիրարկման մեխանիզմները տարբեր են՝ կախված կոնկրետ երկրների իրավական համակարգերից:

Հետազոտության շրջանակում դիտարկվել են, մասնավորապես, այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կատարող ճանաչվելու իրավունքի և կատարման վերարտադրության գործնական սահմանափակումների հավասարակշռման հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել դեպքերին, երբ տեխնիկապես կամ գործնականում հնարավոր չէ կատարման պահին հիշատակել բոլոր կատարողների անունները:

Միևնույն ժամանակ, վերլուծության առարկա են դարձել կատարողի համբավի և արժանապատվության իրավունքները, ինչպես նաև այդ իրավունքների սահմանման առանձնահատկությունները՝ միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Կատարումների և հնչյունագրերի համաձայնագրի և Պեկինի պայմանագրի դրույթների շրջանակում:

Հոդվածում հիմնավորվում է, որ ՀՀ օրենսդրությունն անհրաժեշտ է դրսևորի համապարփակ և համակցված մոտեցում՝ ներառելով վերոնշյալ պայմանագրերում ամրագրված եզրութաբանությունն ու մոտեցումները:

Ի վերջո, հոդվածը եզրակացնում է, որ կատարողներին, բացի ճանաչման, համբավի և արժանապատվության իրավունքներից, պետք է վերապահվեն նաև կատարման հրապարակման և հետկանչի իրավունքները, որպես անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության ամբողջական համակարգի մաս:

Annotation. The article aims to examine the specific features of the protection of performers' moral rights in the context of the legislation of the Republic of Armenia and international legal instruments, considering the ways these rights are implemented and the current challenges they face. The relevance of the research lies in the fact that the recognition of performers' moral rights at the international level remains a relatively recent phenomenon, and their application varies depending on the legal system in question.

Within the scope of the research, questions have been addressed regarding how to balance the right of attribution with the practical challenges of performance reproduction. In this regard, attention is drawn to situations where it is practically impossible to indicate the names of all performers at the time of the performance.

Simultaneously, the study analyzes the particularities of defining the right of integrity within the framework of international treaties, specifically in the context of the provisions of the WIPO Performances and Phonograms Treaty (WPPT) and the Beijing Treaty on Audiovisual Performances. The article argues that the Armenian legal system should adopt an integrated approach that incorporates the terminology and conceptual framework set forth in the above-mentioned international instruments.

Ultimately, the article concludes that, in addition to the rights of attribution and integrity performers should also be granted the rights to disclose and withdraw their performances.

Аннотация: Целью настоящей статьи является исследование особенностей защиты личных неимущественных прав исполнителей в контексте законодательства Республики Армения и международных правовых актов, с учетом способов реализации данных прав и современных вызовов в данной сфере. Актуальность исследования обусловлена тем, что признание личных неимущественных прав исполнителей на международном уровне является относительно новым явлением, а практика их применения различается в зависимости от правовых систем.

В рамках исследования рассмотрены вопросы, касающиеся поиска баланса между правом быть признанным исполнителем и практическими проблемами, связанными с воспроизведением исполнения. В данном контексте особое внимание уделяется случаям, когда на практике невозможно указать имена всех исполнителей в момент исполнения.

Параллельно в исследовании проанализированы особенности определения права исполнителя на защиту чести и достоинства в контексте международных договоров, в частности, положений Договора ВОИС об исполнениях и фонограммах и Пекинского договора об аудиовизуальных исполнениях. В статье обосновано, что законодательство Республики Армения должно применять комплексный подход, включающий терминологию и концептуальные рамки, предусмотренные вышеуказанными международными договорами.

В заключение можно прийти к выводу, что, помимо права быть признанным исполнителем и права на защиту чести и достоинства, исполнителям также должны быть предоставлены права на опубликование и отзыв исполнения.

Բանալի բառեր *- կատարողներ, հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, անձնական ոչ գույքային իրավունքներ, հետկանչ, անվան իրավունք, հրապարակման իրավունք:*

Keywords: *performers, copyright, neighboring rights, moral rights, withdrawal, right of attribution, right of first disclosure.*

Ключевые слова: *исполнители, авторское право, смежные права, личные неимущественные права, отзыв, право на имя, право на первое обнародование.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Adler, Bernard. "The Proposed New WIPO Treaty for Increased Protection of Audiovisual Performers: Its Provisions and Its Domestic and International Implications." Fordham Intellectual Property, Media and Entertainment Law Journal, 2002.

2. Bird, Robert C., and Lucille M. Ponte. Protecting Moral Rights in the United States and the United Kingdom: Challenges and Opportunities Under the UK's New Performances Regulations. Boston University International Law Journal, vol. 24, 2006.

3. Garcia v. Google, Inc., 743 F.3d 1258 (9th Cir. 2014), amended by Garcia v. Google, Inc., No. 12-57302, 2014 WL 3377343 (9th Cir. July 11, 2014).

4. Ferrari, Joe. "Garcia v. Google: The Impracticalities of Awarding Copyright Authorship for Five Seconds of Fame." Santa Clara Law Review, vol. 56, 2016 https://digitalcommons.law.scu.edu/cgi/viewcontent.cgi?article=2823&context=lawreview. Accessed 12 May 2025.

5. WIPO. Records of the Diplomatic Conference on Certain Copyright and Neighboring Rights Questions, Geneva, 1996.

6. Guinness World Records. "The Largest Band." https://www.guinnessworldrecords.com/world-records/69651-largest-band. Accessed 12 May 2025.

7. NBC News. "Pavarotti Widow Tells Trump to Stop Using 'Nessun Dorma' in Campaign." NBC News, July 2016, https://www.nbcnews.com/news/world/pavarotti-widow-tells-trump-stop-using-nessun-dorma-campaign-n614721. Accessed 12 May 2025.

8. Opera News. "In Search of Pavarotti." Opera News, Nov. 1998, https://www.operanews.com/Opera_News_Magazine/2016/In_Search_of_Pavarotti.html. Accessed 12 May 2025.

Հովհաննիսյան Ա. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլհասցեն՝ arpinehov@gmail.com:

Այվազյան Մ. - Իրավագիտության մագիստրոս, էլհասցեն՝ ayvazyan.mariam@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 29.05.2025 թ., տրվել է գրախոսության 10.06.2025 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Թավադյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: